ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2024թ. թիվ 89 -Ա ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Որոշում եմ.

1. Հաստատել՝

1.1. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի սոցիալական ցանցերի էջերի, դրանց գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստերի, հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի:

1.2. Սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի մուտքանունների և գաղտնաբառերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

1.3. Սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

2.1. Սույն որոշման 1.2-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված սոցիալական ցանցերի էջերի գաղտնաբառերը ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի հանձնարարությամբ թարմացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:

2.2. Սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաշվառվում և պահպանվում են

անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունում:

2.3. Ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը ենթակա են պարտադիր փոփոխության մինչև սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց փոփոխությունը կամ պաշտոնավարման դադարեցումը:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 3/27/2024 16:28:28 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ